

**ՇԱՄՇԱԴՆԵՑԻ ԾԵՐՈՒՆՈՒ ԳԼԽԻ ԷԿԱԾԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /  
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի տարի ես մի էրկու թուրքի հետ գնացի Շամշադին: (Հա կզիտենաք, որ իմ ոտքը շատ վախտ Բորչալվում ա ըլում. ես ընտի թուրք աղնա շատ ունիմ):

Գնացինք Շամշադին, ուզում ինք Ղարաբաղ գնանք: Շասանք Շամքոր գեղը, մի տուն դոնաղ ընկանք: Էղ տունը մի գյուռ օջախ էր. իրանք էլ վեցօխտն ախալեր ին: (Հա՝, եղ գեղի կեսը թուրք ա, կեսը հայ): Մենք հայի մի շեն տանն ինք: Միգունք մեզ հմա սուփրա բաց արին: Մեր խաթեր բոլոր ախալերտինքն էլ հավաքվեցին ըստի: Դրանց մեջ մի մարդ կար սիպտկամիրուք: Մեկելնին, նրանից ջահելնին, նստել ին ու եղ ծերունին էր մեզ որովուդ անում: Սուփրեն քաշելուց եղը ես կամաց ասի թուրքերին.— Ես սրանց, մի բան պտեմ ասիլ:

— Ընչի՞ ա պետքը,— ասին թուրքերը,— մենք դարիք դոնախնի ինք, մի բան կասես, սրանք մեզանից կնեղանան:

— Չէ՝,— ասի,— համփերությունս հատել ա: Ու ձենս բարձրացրի:

— Ախալեր, համարձակություն չըլի, որ ասեմ թէ՝ ձեր հացը ուտելու չի:

Նստածներից մինք վեր կալավ ասավ.— Ընչի, ախալեր, թեզ խո մի թթու խոսկ ասող չէավ:

— Չէ՝,— ասի,— ամա ձեր հացը ընդուր չի ուտելու, որ ջահելնին նստել են, ես ծերունին ա մեզ դուլուդ անում:

Նստածնին ջիմն էլ ծիծաղեցին:

— Ղարիք ախալեր,— ասավ ծերունին,— դոք հացներդ անուշ արեք, պյուծեք ու եղնա, ես իմ զլիի էկածը ձեզ կը պատմեմ: Ու էն վախտ կիմանաք, թէ բանն ընչո՞ւմն ա:

Հաց կերանք պյուծանք: Մեկելնին վեր կացան գնացին: Մնաց մեր կշտին մենակ էր ծերունին: Ու նա սկսեց իր զլիի էկածը մեզ պատմել:

— Թափազյողի մոտ: Մի տարի էնպես մի թանգություն, մի սով ընկավ մեր երգիրը, որ փութը հինդ մանեթով հաց չէր ճարպում: Մեր գեղոցի ինձանով չորս տղա ընկեր, ընզանք, վեր կացանք գնացինք ուրիշ երգիր, որ աշխատանք անենք, գոյնա մեր գլուխներն էլա պահենք: Գնացինք: Շատ գնացինք, թէ քիչ, աստոծ ա խարա: Գնացինք մի ահազին սարի դեմ առանք: Էղ սարի դոշովը երմի գնում ենք: Գնացինք տեհանք, որ եղ սարի դոշումը մի սուրու ոչխար ըրածում ա, մի երկար-բոյով մարդ էլ ըղաքին կանգնած: Դրանց դոիցն անց կացանք, եղ սարի որբումը մի էր կար: Գնացինք էր էրին դեմ առանք: Ասինք՝ «Էս լավ քնելու տեղ ա, գիշերս ըստի սթար անինք»: Ներս մտանք տեհանք, որ ըստի ոչխար են տուն անում. ոչխարի զիով ա: Տեհանք որ մի կողքն էլ կտրած կարգին օթախ ա, կրակը թեծ, կարպետնին զցած, ճրաքը վառած: Ուրախացանք, ասինք. «Փա ոք թեզ աստոծ, ես հիել մեզ հմար ա պատրաստած, զշերս ըստի լավ յոլա կերթանք»: Մի քիչ հաց ունեինք մեզ հետ, հանեցինք կերանք, պյուծանք:

Ըստի նստած զրից ինք անում, խելի վախտ զշերից անց էր կացել: Մին էլ տեհանք ոչխարը բերին, արին էղ էրը: Չորանը որ տուն էկավ, տեհանք մի երկար-երկար աժդահա մարդ, էկավ մեզ մոտեցավ, արիսէին նստեց ու մեզ հետ խոսաց ոչ:

Չիբուխը թաղքի տակից հանեց լրցրուց. ի՞նչ չիբուխ, մի հետումը կտաներ մի զրվանքա թութուն: Չիբուխը քաշեց պյուծավ ու եղ դառավ մեր ընկերտանց մնի գլուխը ձեռով պոկեց, ոնց որ մենք մի հավի ճիտ ըլորինք ու պոկինք: Պոկեց ու կերավ: Մենք մնացինք զարմացած, վեր քաշված, թե էս ինչ փորձանք էր, որ մեր գլուխն էկավ:

Մի քիչ կացավ ու մեկել ընկերիս գլուխն էլ պոկեց ու կերավ: Մնացինք էրկուսը: Էն էրկուսին կերավ ու պյուծավ: Քիչ վախտից եղը եղ անկշտումը իմ կշտին մնացած մի հատիկ ընկերոց գլուխն էլ պոկեց ու կերավ: Միսն էլ շամփուր արավ, մի մենձ շամփուրի մեջ անց կացրուց,

խորվեց ու պատն ի դուս տնկեց: Մնացի կենտու ես: Ես էլ մնացի ըռավոտվա փայլ: Ու ինքը՝ եղ անտեր Թափազյոզը, խսոր ընկավ ու շնթռեց, խորը քուն մտավ: Դես ընկա, դեն ընկա ու զացի փախչեմ, հնար չգտա: Դանը Թափազյոզը մի մենձ սալ էր դեմ արել, ինչ իմ բանն էր նրա ժած տալը: Միեւ բրավուրդ արի, որ դռան կողքին, սալի կշտին մի էրկարե լում վեր զցած: Լոմը վեր կալա բերի դրի կրակումը: Էրկարի ծերը, որ մի լավ պոզացավ, վեր կալա ու քնած Թափազյոզի աշքը կրիսեցի:

Նս որ քնած տեղից մի ծղրտաց, ես իմացա ոչ թե որդի ընկա: Մին էլ ուշքի էկա տեհա, որ ոչխարի ոսի տակն եմ ընկել, ոչխարնին ինձ տրորում են, ոսի տակ զլում, ոնց որ քեշեն հասիր անելիս զլում են:

Մին էլ տենիմ մտել ա ոչխարի մեջը, ինձ ման ա զալի: Ծորրտում ա, ես պատովն ա դիպչում, էն պատովն ա դիպչում: Ինձ որ չտավ, աշքի մղկտոցն էլ որ հովացավ, մի քիչ հանդարտվեց: Գնաց դռան կշտին մեջքը պատին դեմ արավ: Հեռվից բրավուրդ արի. սվաղա քոռացել էր:

Սկսեց իրան-իրան խոսալ: Ես նրա ձեռների ժած տալուց գլխի ընկա, որ ասում ա թե.

«Կիսանա, ոչխարը դուս կանեմ, նա էլ կզա, ձեռով ըսենց ճիտը կոլորիմ, գլուխը կպոկեմ, իրան կդաղեմ, սիրտս մի քիչ կհովացնեմ»:

Շատ մտիկ արի, թե ոնց պրծնեմ եղ պատուհասից: Ոչխարի միջին մի մենձ տըրը էծ կար, ոչխարի էր քաշը: Բերի էր էծը մորթեցի, տիկ հանեցի ու ես միջին կլորվեցի, որ ոչխարի հետ դուս գնամ ու եղ հնարքով նրանից պրծնեմ:

Որ լիսացավ (Ես ընդուց զարմացա, որ նա քոր մարդ ոնց իմացավ, որ լիսացավ), դուռը բաց թողեց ու ոչխարը վեր էթող: Ինքը հմի շեք ա արել, մի ոտն էս կռանը, մի ոտն էն կռանը, ու ոչխարնին կենդ-կենդ շեքովն անց ա կացնում և ձեռով շոշափում: Ես էլ իծի մորթումը փթաթված դոչի եղնուց գալիս եմ: Որ էկա հասա նրա կուշտը, գլուխս դրի դոչի դմակի տակը, ես էլ չորեքթաթ արի ու անց կացա: Նա ինձ ձեռը տվուց տեհավ, որ իծի մազ ա, բրախեց: Ես պրծա, լիս աշխար դուս էկա: Հմի դուն ասա՝ իմ շաշությունը, պրծա ու սուս-փուս գնալու հեռանալու տեղը ձեն տվի. «Տն շան որդի, ի նշ ես էր ոչխարը պտոռում, ես դուս եմ եկել, քեզանից պրծել»: Նա որ ձենս իմացավ, իմ ետևից ընկավ:

Ես փախս առա: Դա մի ձեն ա ածում, ծղրտում ա, գոռում, ծվում, ձչում: Նրա ձենի վրա Թափազյոզին դուս էկան. Էր սարերն էր ձորերն լրցվեցին: (Թու հա, տո մի ինձ ասող էր էկել. «Այ տղա, բու ընչի դ ա պետքը, որ դու իմաց արիք: Դե հմի արի, էր ցավից պրծի»: Փախչելով էկա հասա ծովի դրաղը ու ծովի դրաղննի գնում եմ:

Ասստնից էր, ինչ էր, իմ թերը կտրվել չէր. մին էլ տենիմ ծովի դրաղին երկու տախտակ իրար շաթած: Ես էլա էր տախտակի վրա ու մտա ծովը: Հմի լեղ եմ տալի, հրաքար եմ անում հեռանալու դպա ծովի մեջը:

Դրանք էկան, թափազյոզին ծովի դրաղը ծեփ արին: Ինչ հաշամաթ քարեր ին շպրտում դպա ինձ,— դուն ոչ տեսնես: Մինը քար ա վրա անում, մինը՝ ձումք: Որը քարափից մի եքա ժեռ ա պոկում, գորում ծովը, որն էլ մատներով չանգուելով էն թմրերիցը հողակոշտեր ա պոկում ու վրա անում: Ամա մինն էս կռանս ա վեր ընկնում, մինն՝ էն կռանս ու ինձ դիպչում չի: Էնքան հրաքար արի հեռացա, որ նրանց զցած քարն էլ ինձ հասնում չէր:

Եղ մտիկ արի, տեհա, որ երք որ թափազյոզին տեհան, որ ես իրանցից պրծա, եղ դառան, էր քորին կտոր-կտոր, ծվիկ-ծվիկ արին, լափեցին կերան ու ցրվեցին, ամեն մինն իր տեղը գնաց: Ես դուս էկա ծովի մեկել դրաղը: Դուս էկա մի բաղ: Մտա էր բաղի մեջը: Մի մենձ երևելի բաղ էր, հազար ու տեսակ պտուղներով ու ծաղիկներով: Դես ման էկա, ուն ման էկա— մարդ

<sup>1</sup> Այսուեղ բանահավաքը ընդհատել և ենթավերնագիր է նշանակել՝ հեքիաթին՝ «Անմարդ քաղաքն ու ծովի Հուրմալաքը»—Ծ. Կ. :

Հգուա: Ամեն մի բան էլ կար մեյվեն՝ խաղողը, տանձը, խնձորը, մենակ մարդ չկար: Քիչ աղաք գնացի դպա ծովի դրադը, տեհա էրկու սիրուն աղջիկ մի ծառի տակին տանձ ու խնձոր էն հվաքում: Ասի. «Էս հալքաթ բաղմանչու աղջկերքն են: Գնամ հարցնեմ բաղմանչու տեղը»: Դպա դրանց գնացի: Դրանք ինձ բրավուրդ արեցին թե չե, վազեցին ընկան ծովը, ծովեղեն ին, հուրիմալաքնի: Բաղից դուս էկա, գնացի դպա քաղաք, տեհա ըղաքիս մի թեթև քաղաք: Մտա մեջը: Տեհա քաղաքումը շենինդ չկա, մարդ չկա, ձեն-ձուր չկա: Էդ քարքի մեջը ման էկա: Տեհա դուրքաննին լիքը. մի տեղ ճոր ու կտոր դասած, մի տեղ ուտելելեն, մի ուրիշ տեղ էրկաթեղեն: Մի խոսքով, ամեն ասու բարությունով լիքը:

Ամա մի տեղից էլ ա մարդափոտ չի գալի: Վերջը մտա մի շատ մենձ խանութ, ճոթի խանութ էր, ամեն տեսակ խաս ու դրսմաշ կտորնի դարսած:

Ճոթերի հակերի վրա խտոր ընկած քնած էր մի ուշաք՝ մի աժդահա:

Ինձ ու ինձ միտք արի. «Հալքաթ էս աժդահեն ա էս քաղաքը վերջացրել»:

Մի քիչ էլ աղաք գնացի, տեհա մի ուրիշ խանութ. նես մտա տեհա, մի տեղ այսուր կիտած, մի կունն էլ զյուլլա-բարութ: Մի էրկու ջվալ բարութ բերի լցրի էն խանութը, ուր որ աժդահեն էր քնած: Գյուլլիցն էլ բերի: Եղնա կրակեցի, դուռը եղ արի ու փախա, հեռացա: Ոնց որ լաղում զցես, խանութը վեր կացավ, տաղըթմիշ էլավ:

Մին էլ տեհա, աժդիհ թիքենին երկնքիցն ա վեր գալի:

Մնացի էդ քարքի մեջ մեն-մենակ: Օրին մի օր մտաբերեցի, որ էն բաղի մեջ մի բան եմ տեհել, գնամ էն բանին, գնացի բաղի միջին, մի ծառի տակին մի ֆոր կտրեցի մտա մեջը, զլուխս խոտով ծածկեցի ու բատի թաք կացա: Ճաշի վախտը տեհա, որ էն էրկու հուրիմալաք աղջկերքը դուս էկան ծովի միջիցը տանձ ու խնձոր հվաքելու: Մինն էկավ էդ ծառի տակը, վըրովս անց կացավ, ոտք դվեր պրծավ ֆորի մեջ: Ես նրա ոտիցը դայիմ բռնեցի: Դա որ ձեն տվուց, էն մինք փախավ ընկավ ծովը: Էդ հուրիմալաքը մնաց իմ ձեռին: Բերեցի էդ աղջկանը իմ կշտին դայիմ պիեցի օխտը տարի: Դրանից էլավ էրկու տղա: Էդ ըրեխեքը ինձ հետ խոսալիս իմ լեզվով ին խոսում, մոր հետ խոսալիս մոր լեզվով: Ամա ոնչ ես մոր լեզուն ի հսկանում, ոնչ էլ նա իմ լեզուն:

Օրին մի օրն էրեխեքն ինձ ասին.— Հայրիկ, մայրիկն ասում ա. «Լավ բոլ ինձ կպած պիեցիր, հմի ինձ բաց թող, էս ա ըրեխակալել ենք, էլ փախչիլ չեմ»:

Ասի.— Ըրեխեք ջան, վախում եմ մայրիկն փախչի:

Ասին.— Վախիլ մի, հայրիկ ջան, փախչիլ չի:

Ես նրան ազատ արձակեցի: Մի քանի վախտ էղպես մնաց: Մի օր էլ իմ կնիկը ասավ ըրեխանցը.— Էկեք գնանք ջրի դրադը ձեզ լողացնեմ:

Ես էլ հետները գնացի: Ըրեխանցը տկլորեց, տաշտակը դրուց, լողացրեց դպա իրան քաշեց, հմի իր ըրեխանցը գուրգուրում ա: Ամա իմ սիրտը մի ահ ա ընկել, վախենում եմ: Մին էլ տեհա ըրեխանց կոնիցը բռնեց ու թռավ ընկավ ջուրը: Կնիկս ու ըրեխեքս ձեռիցս գնացին, մնացի էդ քարքի մեջը մենակ: Շատ դարդ արի, շատ միտք արի, տեհա որ ըստի մնալն էլ ավելորդ ա:

Վեր կացա մի խուրջին լիքը խաղինա լցրի ու գնացի<sup>2</sup>:

Գնացի դուս էկա մի ուրիշ քաղաք: Մտա էդ քաղաքը, տեհա էրկու ջահել տղա խանութ են սարքել, առուտուր են անում: Ասի.— Ինձ էլ ընկեր արեք:

Նրանք էլ տեհան խուրջինս խաղինով լիքը, ինձ ընկեր արին, էլ ո՞նց չեին ընկեր անիլ:

Մի քանի վախտ շատ սիրով ընկերություն արինք:

<sup>2</sup> Այստեղ բանահավաքն ընդհատել և ենթավիրնազիր է նշանակել «Տարօրինակ քաղաքն ու փուչ սարը»:—Ծ. Կ.:

Մի օր նստած հաց ինք ուտում: Ընկերներիցս մեկը վեր կալավ ասավ մեկելին.— Ընկեր ջան, մենք ամեն մինս, որ բանից պրծնում ենք, գնում ենք մեր տունը: Ամա էս մեր ընկերը մենակ ա: Արի սրան էլ տնավորցնենք:

Գնացին մի աղջիկ ուզեցին ինձ հմար. նշանեցին: Մի օրից եղը էլի նստած հաց ինք ուտում: Դրանք վեր կալան, ասին մին մընու. — Էս մեր ընկերը մեր աշխարքի աղաթն ու կարգը գիտի ոչ, ընչի չենք դրան ասում, կարելի ա, սա ռազի չի, էլ խի ինք սրան զոռով մեզ հետ կապում. — Ձեր աշխարհի կարգն ի՞նչ ա,— հարցրի:

— Մեր աշխարհումն էս կարգը կա,— ասին,— էհ, մահկանացու ենք. մնիս յա կնիկն ա մեռնում, յա մարդը: Էն սարը տենո՞ւմ ես, էդ սարը ծակ ա: Տանում ենք մարդ ու կնկանը, որն էլ որ սադ ա ըլում, մեռածի հետ կախ ենք անում էն սարի գլխից: Էնա կենդանին էլ մեռածի հետ թաղվում ա: Հմի թե դաբուլ ես, քեզ պսակենք:

— Եթ որ ձեր աշխարհի դրությունն էդ ա,— ասի,— ես էլ ձեզանից մինը, ի՞նչ անենք: «Էլինան դարա-գյունքայրամ»:

Բերին ինձ պսակեցին: Անիկս շատ լավն էր: Իրար շատ ինք սիրում: Մի քանի վախտից եղը հիվանդացավ: Իմ սիրտ ահ ընկավ, էկա ընկերնուս ասի. — Տղեք, կնիկս հիվանդացել ա:

— Ի՞նչ անենք, ասին,— հիվանդացել ա՝ կլավանա, աստոծ լավություն տա:

Մի էրկու օրից եղը տեհա կնկանս ռեվուշը լավ չի, օրեցօր հիվանդությունը ծանրանում ա, էկա ընկերնուս ասի. — Տղեք, կնիկս դժար ա, աստոծ գիտի նրա սադանալը:

Նրանք բերին իմ փայը եդ ինձ տվին, ասին. — Քանի վախտին ա, արի քու փայը վեր կալ հալալ փայ արին, աշխատանքն էլ հետք: Իմ փայը վեր կալա, խուրջինս լրցրի:

Կնիկս մեռավ: Էկան, մի դութիկ հազիր արին, քառասուն օրվա պաշար դրին մեջը, կնկանս սեյիդն էլ վեր կալան տարան: Ես էլ խուրջինը շլակեցի, եղեկից գնացի: Գնացինք Փուչ սարի գլուխը: Դրուստ որ սարի գլխին մի մենձ ծով կար: Բերին մեյիդը դրվեր զցեցին, ընտուց եղն էլ ինձ դրվեր զցեցին:

Ես ընկա ներքն. ուշքս գնացել էր: Որ ուշքի էկա, աչք բաց արի, տեհա՝ կնկանս մեյիդը կշտիս: Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ. էղածն էլել ա: Էլ ոնչ հաց ա կուլ գնում, ոնչ աչքունքս բացվում: Ես կենդանի թաղած իմ:

Անց կացավ մի հինգ օր: Շակ սարի գլխին դալմաղալ ընկավ: Մի մեյիդ դրվեր զցեցին: Տղամարդի մեյիդ էր: Քիչ եղն էլ՝ մի կնիկ դրվեր զցեցին՝ իր պաշարովը: Դա էլ մեռած մարդու կնիկն էր: Նա խելի վախտ ուշագնաց մնաց: Եթ ուշքի էկավ, աչքը բաց արավ՝ տեհավ ես ընտի կենդանի մարդ: Մենք սկսեցինք իրար սիրտ տալ, իրար մխիթարել: Երկուսս էլ դարդավոր, երկուսս էլ կենդանի թաղված: Մեր դարդը մին էր, ծանդը ու անհուսալի: Նա ինձ էր սիրտ տալի, ես՝ նրան: Մենք երկուսս էլ էղքան մեռելնու մեջ կենդանի թաղված մին մնու համար ամեն ինչ էինք էդ գետնի տակին, խավար աշխարքում: Ու մենք իրար սիրեցինք սրտով կապվեցինք: Դառանք մարդ ու կնիկ: Ըլատա, էս լուս աշխարքում ոնչ մի մարդ ու կնիկ էնքան իրար սիրելիս չըլեին, իրար հավատարիմ ու սրտով կապված, ինչ որ մենք էինք էն մութ աշխարքում, Փուչ սարի միջին մ եռելն երի մեջ:

Ըսենց անց կացավ խելի ժամանակ: Մին էլ միտք արի ու կընկանս ասի. — Այ կնիկ ջան, արի ճրագ վառենք էս սարի տակը ման գանք, կարելի ա մի ճամպա գտնենք, էս գերեզմանից դուս գալու հմար: Ու մենք ճրագ վառեցինք ու սկսեցինք ման գալ: Օ՛, ինչ ասես, որ չտեսանք. էդ մահի թագավորություն էր: Սառն ու անկենդան մեյիդներ, աջ ու ձախ փուշած... Էհ, էս ընտեղ տեսածից էլ բան չեմ ասում: Քանի միտս ա գալի, ջանս սարսում ա: Լավ ա թողնեմ, էդ մնաց: Հա, մենք դես ման էկանք, դեն ման էկանք, վերջը հեռվից մի լիս արինք: Դպա էն լիս զնացինք: Տեհանք՝ մի արջ մի էրի միջով մի ծակ ա բաց արել, էկել ջամդաք ա լափում: Մեզ որ

տեհավ, փախավ, դուս կավ: Օ՛, ո՞վ կարա պատմիլ, մեր ուրախութինուն էլ չափ լկար: Մենք լիս տեհանք, ասու լիսը: Մեռածը ոչինչ, ամա կենդանին խավարի միջին— ինչքան ն դժար ա: Ես կնկանս ընտի նստացրի, որ լիսու ծակը կորցնենք ոչ ու եղ գնացի: Իմ խուրջինը ուսկով լիքը ու մեր ունեցած բաներից էլ ինչքան կարացի վեր կալա ու էկա կնկանս կուշտը:

Լիսածակով դուս էկանք լիս աշխար... Ու ճամպա բոնեցինք դպա մեր երգիրը:

Ցերեկը թաք կենալով, զիշերը ճամփա կտրելով՝ հասանք ծովի դրաղը<sup>3</sup>:

Ծովի դրաղին մի զյամի կար: Մտանք էր զյամու մեջը ու զյամբուն ասինք, որ մեզ հասցնի ծովի մեկել դրաղը: Գյամչին ելքանը վեր թողուց ու մենք ճամպա ընկանք: Որ հասանք ծովու մեշտեղը, զյամբու միտքը փոխվեց, ուզեց կնկանս ինձանից իսլի: Նա իր չար միտքն ինձ հայտնեց ու ուզեց ինձ կապի, ծովը գցի: Ես ու նա սկսեցինք կողիվ տալ: Իմ կնիկն էլ իմ կրանն էր, ոնչ մենք ինք գոռում, ոնչ՝ նա: Էդ վախտը մի զարմանալի բան պատահեց. ծովի միջից դուս էկան շատ հուրի մալաք տղեք ու աղօկերք ու զյամու չորս կուռը կտրեցին: Էրկու սիրուն տղա՝ մինը զյամու էս կուռը կտրած, մինն էլ էն կուռը՝ ձեն տվին.— Ճե յ, անպիտան զյամչի, եր ի՞նչ՝ ես անում, եղ ո՞ւ մ հորն ես նեղացնում: Գնա սուս ու փուս զյամուդ գլուխը բռնիր ու քշիր, թե չէ՝ ես սահաթին քեզ էլ, քո զյամին էլ բաթմիշ կանենք: Խելքը ո՞ւ մ վրա ա գնում:

Ես ճանաչեցի իմ տղերանցն ու նրանց մորը, որ մեկել հուրիմալաքնու հետ դուս էր եկել ծովի կրեսը:

Նրանք՝ իմ տղերքը իրանց ընկերտանց հետ, զյամու էս կուռն, էն կուռը կտրած զյամբուն քշիլ տվին մինչի ծովի մեկել դրաղը: Գյամբուն հրամայեցին, որ մեզ սալամաթ հանի ցամաք:

Գյամբչին անխոս առանց ձեն ու ծպտուն հանելու նրանց հրամանը կատարեց:

Որ ցամաք դուս էկանք, ես աղաչանք արի իմ աղարվա հուրիմալաք կնկանը, որ թողա րեխանց թուշը պազեմ: Նա էլ նշան տվուց ու տղերանց լեզվով ինձ ասավ.— Թող էր կնիկը կռներդ մեջքիցդ կապի, եղնա արի տղերանցդ համբուրի:

Ըթենց էլ արինք: Ես կապած կռներով համփուրեցի իմ հուրիմալաք տղերանցը, սիրտս հովացավ ու քաշած բոլոր նեղությունին մտիցս զցեցի: Իմ տղերքը, իրանց մերը ու մեկել հուրիմալաքնին ծովի տակն արին: Ու մենք մնացինք պլշած կանգնած: Քիչ եղո ճամպա ընկանք: Մի քանի օր անց կացավ, հասանք մեր գեղը: Ախպերտինքս շատ ուրախացան, որ համ իրանց կորած ախպերն էկավ, համ էլ էնքան ոսկի բերուց: Էդ ոսկով մեր բոլոր պակասություննին դրստեցինք: Հմի փառք ասու. էս գեղում մեր ոստով մարդ չի զալիս:

Ծերունին իր պատմությունը վերջացրուց ու վրա բերուց.— Էն ախպերտինքս, որ ըստեն նստած ին, չիմն էլ ինձանից մենձ ին: Ես ամենից պուճուրն եմ: Դե, էսքան բան որ մի մարդի զիսով անց կենա, նա ծերանալ չի, ես էլ ըթենց:

Ես ասավ, չասավ, կնկանք ձեն տվուց.— Այ կնիկ, տեղաշորը քեր, դոնախնու տեղը գցիր:

Կնիկը դուս էկավ, մի սիրուն կնիկ՝ շիլմաթ ու լստիկ բոյով:

Ծերունին մատով նշան տվուց.— Ես էլ իմ կնիկը, որ հետս բերել եմ:

Ավետ ապերը վերջացրեց: Ես ու Աղասին սկսեցինք ծաղրել նրան, որ ուրիշների հեքիաթն իր վրա ա շուր տալիս ու հեռվից լսածն իբրև ականատես դուս բերում: Ախար էր հեքիաթներն ամեն տեղ պատմում են. մի տեղ ավել, մի տեղ պակաս:

Ավետ ապերը քմծիծաղ տալով, ըստ երևույթին նեղացած ձևացավ ու վրա բերեց.— Էդ որ ասում ենք սարքովի ա, բա ըստուր ի՞նչ կասեր:

Եվ նա պատմեց հետևյալը:

<sup>3</sup> Այստեղ բանահավաքը ընդհատել է և ենթավերնագիր է նշանակել՝ «Ծովի վրա ու տանը»:—Ծ. Կ.: